ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԴԵՊՔԵՐԻ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՑԱՆԿԸ

1. **«Ինվիա Ինվեսթմենթս» փակ բաժնետիրական ընկերության** (այսուհետ՝ «Ընկերություն») կողմից ներդրումային ծառայություններ մատուցելիս առաջացող հնարավոր շահերի բախումների տեսակները հետևյալն են՝

1) Հաճախորդի հետ արժեթղթերի առուվաճառքի գործարքների կնքում շուկայականից տարբերվող գներով՝ ի վնաս Հաճախորդի, հօգուտ Ընկերության կամ դրա աշխատակցի,
2) Հաճախորդին պատկանող արժեթղթերի վաճառք շուկայականից ավելի ցածր գնով Ընկերությանը, Ընկերության աշխատակիցներին կամ վերջիններիս և/կամ Ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձանց,
3) Հաճախորդին պատկանող միջոցների ներդրում Ընկերության, Ընկերության աշխատակիցների և/կամ Ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձանց պատկանող արժեթղթերում,
4) Հաճախորդի միջոցների հաշվին ավելորդ կամ վերջինիս շահերին չհամապատասպանող գործարքների իրականացում, որը նպատակ է հետապնդում մեծ ծավալներով միջնորդավճարների գանձում Հաճախորդից,
5) Հաճախորդի կողմից տրամադրված ծառայողական տեղեկությունների օգտագործումը հօգուտ Ընկերության, Ընկերության աշխատակցի կամ այլ փոխկապակցվախ անձի և ի վնաս Հաճախորդի,
6) Արժեթղթերով այնպիսի գործարքների իրականացումը, որոնք կարող են լինել ի շահ մեկ Հաճախորդի և ի վնաս մեկ այլ Հաճախորդի:

2. Վերոնշյալ հնարավոր շահերի բախումների ցանկը սպառիչ և ամբողջական չէ: Ներդրումային ծառայությունների մատուցումը կարող է ուղեկցվել շահերի բախումների նաև այլ դեպքերով:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼԻՍ

3. Շահերի հնարավոր բախումները կանխարգելելու նպատակով Ընկերությունը կիրառում է հետևյալ միջոցառումները՝

1) Ընկերության աշխատակիցը Հաճախորդների գործարքները կնքում է Հաճախորդի կողմից ներկայացված պատշաճ ձևակերպված դիմումի հիման վրա,
2) Ընկերությունը խուսափում է այնպիսի գործարքների կնքումից, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ Հաճախորդի շահերի վրա:

4. Արժեթղթերի շուկայում գործառնություններ իրականացնելիս Ընկերությունը գործում է ելնելով բացառապես Հաճախորդի շահերի պաշտպանությունից: Այդ նպատակով Ընկերության համապատասխան աշխատակիցները պարտավոր են՝

1) Պահպանել ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, Ընկերության ներքին կանոնները, ինչպես նաև աշխատանքային և մասնագիտական էթիկայի կանոնները,
2) Չիրականացնել Հաճախորդի շահերին հակասող գործարքներ, որոնք կհանգեցնեն վերջինից գանձվող միջնորդավճարների և այլ վճարների ծավալների մեծացմանը,
3) Գործել ազնիվ և բարեխիղճ:

5. Իր կամ Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին գործարքներ իրականացնելիս Ընկերությունը և համապատասխան աշխատակիցը միջոցներ է ձեռնարկում, որպեսզի դրանք կատարվեն անկողմնակալ, անհապաղ և ճշգրիտ: Այդ միջոցառումները պետք է հնարավորություն տան Հաճախորդի այլ հավասար պայմաններ ունեցող պատվերները կատարել ըստ ներդրումային ծառայության մատուցող անձի կողմից դրանց ստացման հաջորդականության:

6. Իր կամ Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին գործարքներ իրականացնելիս Ընկերությունը և համապատասխան աշխատակիցը պետք է.

1) Համոզվի, որ գործարք կատարելու համար պատվերները պատշաճ կերպով գրանցվել և ներկայացվել են կատարման,
2) Այլ հավասար պայմաններ ունեցող պատվերները կատարի ըստ դրանց ստացման հաջորդականության, բացառությամբ, եթե պատվերի բնութագրիչները կամ շուկայում ստեղծված իրավիճակը դա անհնարին են դարձնում,
3) Համապատասխան Հաճախորդի պատվերի առկայության դեպքում Ընկերությունը խուսափում է պատվերի առարկա գործարքին նույնական գործարք իրականացնելուց նախքան Հաճախորդի պատվերի կատարումը
4) Հաճախորդին անհապաղ տեղյակ պահի այն էական դժվարությունների կամ բացասական հանգամանքների մասին, որոնք անհնարին են դարձնում Հաճախորդի պատվերի ճշգրիտ կատարումը: